



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church  
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

## Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծովի

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk)

[www.styeghiche.org.uk](http://www.styeghiche.org.uk) <https://www.facebook.com/StYeghiche>

# SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

19th January 2020

Bulletin 03/2020

### First Sunday after Nativity (octave)

#### ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 1 ՏԻՄՈԹԷՈՍ ԳՐՈՒԿԾ ՆԱՄԱԿԷՆ 1:1-11

Պօղոս՝ Յիսուս Բրիստոսի առաքեալ մեր Փրկիչ Աստուծոյ եւ մեր յոյսը եղող Բրիստոս Յիսուսի՝ հրամանով,

Տիմոթեոսի՝ հաւատարմով հարազատ զաւակիս. շնորհք, ողորմութիւն ու խաղաղութիւն Աստուծոյ՝ մեր Հօրմէն, եւ Բրիստոս Յիսուսի՝ մեր Տէրոջմէն:

Քեզի աղաչեցի որ Եփեսոս մնաս, երբ ես Մակեդոնիա կ'երթայի, որպէսզի պատուիրես ոմանց՝ ուրիշ կերպով չտրվեցնել, ո՛չ ալ ուշադրութիւն դարձնել առասպելներու եւ անվերջանալի ազգաբանութիւններու, որոնք կը պատճառեն վէճեր՝ փոխանակ Աստուծոյ հանելի շինութեան, որ կ'ըլլայ հաւատարմով: Իսկ պատուէրին վախճանը սերն է՝ բիսած սուրբ սիրտէ, բարի խղճմտանքէ եւ անկեղծ հաւատքէ: Ասոնցմէ վրիպելով՝ ոմանք խտտորեցան փուն խօսքերու մէջ. կ'ուզեն Օրէնքի վարդապետ ըլլալ, բայց չեն հասկնար ո՛չ ինչ որ կը խօսին, ո՛չ ալ այն բաները՝ որոնց վրայ կը պնդեն:

Սակայն գիտենք թէ Օրէնքը լաւ է, եթէ մէկը գործածէ զայն օրինաւոր կերպով, սա՛ գիտնալով թէ Օրէնքը տրուած է ո՛չ թէ արդարներուն համար, հապա՛ անօրէններուն եւ ըմբոստներուն, ամբարիշտներուն ու մեղաւորներուն, անսուրբերուն եւ սրբապիղծներուն, հայր զարնողներուն, մայր զարնողներուն, մարդասպաններուն, պոռնկողներուն, արուազէտներուն, մարդ զողողողներուն, ստախօսներուն, երդմնազանցներուն, եւ ուրիշ որեւէ բանի համար՝ որ հակառակ է ողջամիտ վարդապետութեան, համաձայն երանելի Աստուծոյ փառաւոր աւետարանին՝ որ վստահուեցաւ ինձի:

#### The Epistle of St Paul to the 1 Timothy 1:1-11;

Paul, an apostle of Christ Jesus by the command of God our Savior and of Christ Jesus our hope,  
To Timothy my true son in the faith:

Grace, mercy and peace from God the Father and Christ Jesus our Lord.

#### Timothy Charged to Oppose False Teachers

As I urged you when I went into Macedonia, stay there in Ephesus so that you may command certain people not to teach false doctrines any longer or to devote themselves to myths and endless genealogies. Such things promote controversial speculations rather than advancing God's work—which is by faith. The goal of this command is love, which comes from a pure heart and a good conscience and a sincere faith. Some have departed from these and have turned to meaningless talk. They want to be teachers of the law, but they do not know what they are talking about or what they so confidently affirm.

We know that the law is good if one uses it properly. We also know that the law is made not for the righteous but for lawbreakers and rebels, the ungodly and sinful, the unholy and irreligious, for those who kill their fathers or mothers, for murderers, for the sexually immoral, for those practicing homosexuality, for slave traders and liars and perjurers—and for whatever else is contrary to the sound doctrine that conforms to the gospel concerning the glory of the blessed God, which he entrusted to me.

#### Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

**ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԷՏԱՐԱՆԵՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 2:1-11**

Երրորդ օրը հարսանիք մը կար Գալիլեայի Կանա քաղաքը, եւ Յիսուսի մայրը հոն էր: Յիսուս ալ հրաւիրուեցաւ այդ հարսանիքին, նաեւ՝ իր աշակերտները: Երբ գինին պակսեցաւ, Յիսուսի մայրը ըսաւ անոր. «Գինի չունին»: Յիսուս ըսաւ անոր. «Կին, դուն ի՞նչ ունիս ինծի հետ. իմ ժամն դեռ հասած չէ»: Իր մայրը ըսաւ սպասարկուներուն. «Ի՞նչ որ ըսէ ձեզի՝ ըրէ՛ք»: Հոն վեց քարէ կարաս դրուած էր՝ Հրեաներուն մաքրուելու սովորութեան համաձայն. իւրաքանչիւրը կը պարունակէր երկու կամ երեք մար: Յիսուս ըսաւ անոնց. «Լեցուցէ՛ք այդ կարասները ջուրով». ու լեցուցին զանոնք՝ մինչեւ բերանը: Եւ ըսաւ անոնց. «Հիմա հանեցէ՛ք ու տարէ՛ք սեղանապետին». անոնք ալ տարին: Երբ սեղանապետը համտեսեց գինի դարձած ջուրը՝ չէր գիտեր ուրկէ՛ ըլլալը (բայց սպասարկուները՝ որոնք հաներ էին ջուրը՝ գիտէին): Սեղանապետը կանչեց փեսան եւ ըսաւ անոր. «Ամէն մարդ նախ կը մատուցանէ լաւ գինին, ու երբ արբեցած ըլլան՝ ա՛յն ատեն ցածորակը. բայց դուն լաւ գինին պահեցիր մինչեւ հիմա»: Յիսուս իր նշաններուն սկիզբը ըրաւ ասիկա՝ Գալիլեայի Կանա քաղաքին մէջ, եւ ցոյց տուաւ իր փառքը. ու իր աշակերտները հաւատացին իրեն:



wedding in Cana

**The Holy Gospel of Jesus Christ according John 2:1-11**

**Jesus Changes Water Into Wine**

On the third day a wedding took place at Cana in Galilee. Jesus’ mother was there, and Jesus and his disciples had also been invited to the wedding. When the wine was gone, Jesus’ mother said to him, “They have no more wine.”

“Woman, **why do you involve me?**” Jesus replied. **“My hour has not yet come.”**

His mother said to the servants, “Do whatever he tells you.”

Nearby stood six stone water jars, the kind used by the Jews for ceremonial washing, each holding from twenty to thirty gallons.

Jesus said to the servants, **“Fill the jars with water”**; so they filled them to the brim.

Then he told them, **“Now draw some out and take it to the master of the banquet.”**

They did so, and the master of the banquet tasted the water that had been turned into wine. He did not realize where it had come from, though the servants who had drawn the water knew. Then he called the bridegroom aside and said, “Everyone brings out the choice wine first and then the cheaper wine after the guests have had too much to drink; but you have saved the best till now.”

What Jesus did here in Cana of Galilee was the first of the signs through which he revealed his glory; and his disciples believed in him.

After this he went down to Capernaum with his mother and brothers and his disciples. There they stayed for a few days.

**Ս. Անտոն, Տրիփոն, Պարսամ և Ոնոփրիոս ճգնավորներ հիշատակության օր**

Քրիստոնեության տարածումից որոշ ժամանակ անց սկսվել է ճգնավորական շարժումը: Ծգնավորներն այն մարդիկ էին, որոնք ամբողջապես նվիրվում էին Աստծուն, հեռանում անմարդաբնակ վայրեր և աղոթքներով ու ծոմապահությամբ, Աստծո շնորհով հաղթահարում մարդկային թուլությունները, հասնում հոգևոր կատարելության: Տարիներ հետո ճգնավորները նաև հրաշագործությամբ և աղոթքներով բժշկելու շնորհ էին ստանում:

Ս. Անտոն ճգնավորը կամ Ս. Անտոն Անապատականը ճգնավորության և վանական կյանքի հայրն ու հիմնադիրն է: Երանելի այրը ծնվել է Եգիպտոսի Կոմա գյուղում 251 թվականին, ազնվական ծնողների ընտանիքում: Ծնողների մահից հետո Անտոնը ժառանգում է նրանց հարստությունը: Սակայն մի օր եկեղեցում լսում է ավետարանական այն պատգամը, որտեղ Հիսուս ասում է. «Եթե կամենում ես կատարյալ լինել, գնա վանառիք քո ունեցվածքը ու տուր աղքատներին, և երկնքում գանձեր կունենաս»: (Մատթ. 19:21):

Առաջնորդվելով այս պատվիրանով, Ս. Անտոնը վանառում է իր ողջ ունեցվածքը և ապրում աղոթքի, պահեցողության ու բարեգործության ոգով: Որոշ ժամանակ անց, նա հեռանում է իր հայրենի գյուղից և բնակություն հաստատում մոտակա քարայրում, որտեղ, ըստ վարքագիրների՝ հոգևոր պատերազմներ է մղում վայրի գազանների կերպարանքով իրեն մշտապես հայտնվող դևերի հետ: Համբերությամբ դիմակայելով բոլոր փորձություններին՝ սուրբը հեռանում է անմարդաբնակ մի անապատ և 20 տարի շարունակ ապրում մենության մեջ:

Լսելով նրա սրբակեցության մասին, շատերը թողնում են իրենց տներն ու հեռանում անապատ ճգնելու: Անսալով իր հոգևոր եղբայրների թախանձանքներին՝ սուրբը ելնում է իր ճգնարանից ու հավաքվածներին բացատրում վանական կանոնները, որոնք և հետագայում դառնում են վանական կյանքի ուղեցույց: Սուրբն իր մահկանացուն է կնքում 105 տարեկանում՝ արժանանալով երկնային անթառամ պսակին, իր աներեր հավատով ու հոգևոր մեծ գործությամբ դառնալով օրինակ բոլոր ժամանակների քրիստոնյաների համար:

Ճգնավորներ են եղել նաև Դեկոս կայսեր օրոք Նիկիա քաղաքում նահատակված Ս. Տրիփոնը, 5-րդ դարի կեսերին Սիրիայի անապատներում բնակվող Ս. Պարսամ ճգնավորը և եգիպտացի ճգնավոր Ս. Ոնոփրիոսը (4-րդ դար): Վերջինս որոշ ժամանակ վանքում մնալուց հետո հեռացել է անապատ, որտեղ ապրել է 60 տարի՝ առանց որևէ մեկին հանդիպելու: Ս. Ոնոփրիոսն այլ ճգնավորների պես աղոթքի ուժով բուժել է շատերին և փրկել տառապանքներից: Այդ պատճառով էլ հատկապես այս սրբին են աղոթքով դիմում երեխաներին բժշկելու և ծանր ծննդաբերության ժամանակ:

Հայ Առաքելական եկեղեցին առանձնահատուկ կարևորում է ճգնավորներներին և ունի նրանց հիշատակին նվիրված տոներ:

### Commemoration of St. Anton the Hermit

Sometime after the spreading of Christianity the hermits' movement started. Hermits were those persons who devoted themselves to God, went to uninhabited places and deserts and spent their life there praying and fasting. Thus, by God's will they overcame the human faults and attained spiritual perfection. After many years of ascetic life the hermits were granted the grace of working wonders and healing the sick by means of prayers.

St. Anton the Hermit is the founder of ascetic and monastic life. He was born in the village Koma, Egypt, in 251, in a noble family. After his parents' death Anton inherited their wealth. Once in the church he listened the evangelical commandment, in which Jesus says: "If you want to be perfect, go and sell all you have and give the money to the poor, and you will have riches in heaven; then come and follow me." (Mt 19:21). Being led by this commandment, Anton sold all of his property and lived in the spirit of praying, fasting and doing charity. After some time he left his native village and began to live in a cave, where according the hagiographers he struggled against the demons and devils who constantly appeared to him in the appearance of wild beasts. Patiently facing all temptations the saint left for a desert and lived there completely isolated for 20 years. Becoming aware of his ascetic and secluded life, many people left their houses and went the desert to live ascetic life. Upon the request of his spiritual brothers St. Anton came out of his cave and explained the assembled people monastic cannons and rules, which later became the guideline for monastic life. The saint passed away at the age of 105.

## 3: This week's message from our Priest in Charge

### Մեկնութիւն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

**«Սեղանապետը ճաշակեց զինի դարձած ջուրը ու չէր խմանում, թէ որտեղից է»** (Յովհ. 2.9):

Սիրելի եղբայրներ եւ քոյրեր,

Բաժակով օրհնուած զինին , որ խմում է նորապսակ գոյգը արարողութեանը, կը յիշի ամէն մարդ, որ գէթ մէկ անգամ ներկայ է եղել Հայ Եկեղեցում Պսակի արարողութեան՝ լինի իր պսակը, թէ ուրիշի: Այս գեղեցիկ աւանդութեան հիմքում Քրիստոսի Աւետարանն է՝ Կանայի հարսանիքի դրուագով, ուր Փրկիչը հրաշքով ջուրը զինու փոխեց: Ինչպէս Յովհաննէս առաքեալն է գրում. **«Յիսուս այս առաջին նշանն արեց Գալիլիայի Կանա քաղաքում որպէս սկիզբը նշանների եւ յայտնեց իր փառքը, ու նրա աշակերտները հաւատացին նրան»**: Անգամ «Գալիլիա» տեղանունը թարգմանաբար «ցայտնութիւն» է նշանակում՝ խորհրդանշաբար յուշելով նաեւ, որ Յովհաննէսի վկայութեամբ եւ իր քաղցր քարոզութեամբ արդեն ճանաչուած վարդապետը սովորական մէկը չէ...

Ամէն օր մանուկներ են ծնում, նոր կեանքեր են աշխարհ գալիս՝ իրար նման եւ միաժամամանակ տարբեր: Նման են ծնունդները, կեանքերն են տարբեր: Յիսուս Մանուկի Ծնունդը տարբեր եղաւ բոլոր մարդկանցից, տարբեր եղաւ նաեւ Իր կեանքը, քանի որ Իր դէպքում մարգարէաբար ասուեց «Աստուած մարմին առաւ եւ մեր մէջ շրջեց»: Անշուշտ Յիսուսի Մայրը եւ մտերեմգոյն հարազատները յիշում էին Իր Ծննդեան հրաշալի դէպքերը, հովիւների եւ մոզերի այցերը, հրեշտակի միջոցով զգուշացումը եւ որոշ ժամանակով Եգիպտոսում Հերովդեսի ասքից թաքնուելը, Միմեռն Ծերունու՝ Սուրբ Հոգով ընդառաջ գալն ու մարգարէական խօսքով օրհնութիւնը:

Թերեւս իր քաղաքի եւ իր միջավայր մարդկանց համար Յիսուս սովորական «**Հիւսնի որդի**» էր մինչեւ այն ժամանակը, որ այս միջադէպով սկսեց յիշեցնել, որ Աստուած Իրենով նոր յարաբերութիւն է սկսել մարդկանց հետ: Հրեշտակի կողմից յստակ ասուել էր, որ Նրա անունը Յիսուս պիտի լինի, **«քանի որ նա պիտի փրկի Իր ժողովրդին իր մեղքերից»** (Մատթ. 1.21):

Մեր Փրկչի շնորհը, սերը եւ խաղաղութիւնը հանապազ ձեզ հետ լինեն: Ամէն:

Փրկչի Ծննդեան տօնը Եկեղեցին ութ օր շարունակ է նշում, որ Քրիստոսով Աստծոյ նոր արարչութեան եօթ օրերի եւ գալիք աներեկոյ ութերորդ օրուայ խորհուրդն ունի: Պատահական չէ, որ Ծննդեան Ութօրէքից յետոյ առաջին տօնը սուրբ Յովհաննէս Մկրտչին է նուիրուած, որ Քրիստոսի առջեւից գնացող, Փրկչի ճանապարհը պատրաստող եւ ազդարարողը եղաւ: Նոյն տրամաբանութեամբ տօնական տարուայ սկիզբը սուրբ Կարապետի տօնով է, որ կարծես ազդարարութիւնն է, որ տարուայ բոլոր օրերի մէջ Փրկչին ունենանք, բոլոր սուրբերին Քրիստոսի յոյսով սրբուած տեսնենք, նրանց միջոցով Աստուծոյ հետ նոր յարաբերութեան օրինակը տեսնենք:

Այս եւ յետագայ կիրակիները հաշուում են Սուրբ Ծնունդով՝ Ծննդեան երկրորդ կիրակի, երրորդ կիրակի եւ այսպէս շարունակ: Այս օրերի անտարանական ընթերցումներն էլ կարծես Տիրոջ փրկչական ծրագիրը բացայայտող շարք լինեն: Եւ այս ընկալմամբ է, որ Կանայի հարսանիքի դրուագը պարզ միջադէպ չէ: Այն Յիսուսի Մեսիա լինելու, «Իր փառքը յայտնելու», հրաշքով մարդկանց միտքը Աստծուն բեւեռելու եւ մեր հոգեւոր կեանքը կարգաւորելու կարեւոր հանգրուան է:

Նախելառաջ, Կանայի հարսանիքին Քրիստոսի մասնակցութիւնը ԸՆՏԱՆԻՔԻ նուիրականութեան շեշտումն է: Փրկչի մասնակցութիւնն արդէն օրհնութեան արտայայտութիւն է ամուսնութեան սուրբ խորհուրդի եւ ընտանիքի նուիրական ինստիտուտի նկատմամբ: Անտարանական առակներում յաճախ է, որ երկնքի արքայութիւնը եւս նմանեցւում է հարսանիքի, Փեսային ընդառաջ ելնելուն, խնջոյքի հրաւիրուած լինելուն: Այն նաեւ Եկեղեցու խորհուրդն է, որ երկինք է երկրի վրայ:

Քրիստոս ՈՐԴԻԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ եւ ակնածանքի կարեւոր օրինակ է տալիս, երբ Իր Մօր՝ Սուրբ Կոյսի խօսքին անսալով է կատարում այս հրաշքը: Այն **«Պատուի՛ր քո հօրը եւ քո մօրը»** (Ելք 20:12) աստուածադիր պատուիրանի կիրարկման օրինակ է նաեւ:

Սա նաեւ ՍՈՒՐԲԵՐԻ ԲԱՐԵԽՕՍՈՒԹԵԱՆ գեղեցիկ օրինակ է, որ շարունակուում է Եկեղեցու եւ ամէն հաւատացեալի կեանքում, երբ Աստծուն ուղղուած մեր աղօթքներն ուղեկցւում են Սուրբ Կոյսի եւ բոլոր սուրբերի բարեխոսութեամբ:

Չուրը գինու փոխելու այս հրաշքը նաեւ ապաշխարութեան, ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՋՐԵՐՈՒՄ վերստին ծնունդի միջով անցնելու, հոգեւոր հասունութեամբ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԵԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԵԱՆԸ հասնելու խորհուրդն ունի:

Ինչպէս որ մեր ներքին մարդն է հասունանում աստիճանաբար, այնպէս էլ Աստծոյ յայտնութիւնն է աստիճանաբար մատուցւում մարդկութեանը:

Մենք բոլորս Քրիստոսի եկեղեցու անդամներ ենք, մեր ամենքիս հոգեւոր տունը, դպրոցը, մեղքերի քաւարանն ու հոգու բուժարանն է եկեղեցին: Սակայն շատերիս կեանքի ճանապարհները տարբեր կերպ են եղել եւ այժմ խաչմերուկուել այստեղ: Ոմանց հրաշքից է հաւատքը ծնուել, շատերի համար հաւատքն է հրաշք ծնել: Եկէք սաղմոսերգուի պէս մենք էլ մեր հոգեւոր աչքերը դարձնենք դէպի Աստծոյ արարչութեան սքանչելիքները, մաքրենք հոգեւոր մեր հայեացքը՝ անդրադառնալով, որ ամենուր են Աստծոյ հրաշքները եւ որ այս կեանքն ինքնին Աստծուց տրուած հրաշք է:

Ամէն Սուրբ Պատարագին գինին օրհնութեամբ եւ աղօթքներով մեզ է մատուցւում իբրեւ Քրիստոսի փրկարար եւ սրբագործող Արիւն: Ի տարբերութիւն սեղանապետի՝ մենք գիտենք, թէ որտեղից այս գինին, որ գինի լինելուց անելին է: Հրաշքը շարունակուում է, կարեւոր է, որ այն շարունակուի նաեւ մեր միջոցով, քանզ մենք էլ առաքեալների պէս Իր փառքի վկաներն ենք, իր հրաշքի շարունակութեան ականատեսները: Հաւատքով մեր կեանք բերենք այս հրաշքի պտուղները՝ փառաւորելով մեր Փրկիչ Աստծուն, որ Իր շնորհները առատ կերպով բաշխում է Սուրբ Հաղորդութեան միջոցով:

Մեր Փրկչի շնորհը, սերը եւ խաղաղութիւնը հանապազ ձեզ հետ լինեն: Ամէն:

**Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան**

## Why should I support my Church?

**The following appeared in the last Armenian Church Bulletin issued by the Diocese. It should concern all of us individually. Please read and consider your position.**

At the annual meeting of the Armenian Church Trust (ACT) on Monday 2 December, the activities of the Armenian Church in the United Kingdom were presented, many of which have been described in previous bulletins. **One point that became clear was the increased scope and depth of the programs was made possible by the resources and opportunities of the new Arachnortaran guided by the Bishop and his active supporters.**

It was not a solo speech by the Bishop: those involved with the youth activities, Bible Studies, the Street Festival and lectures participated with their aspirations for the future. **Truly, our church is active and broadening its mission.**

There is, however, a negative aspect to this success that all community members should be aware of. **The Armenian Church Trust (ACT) is running a significant deficit amounting in the last accounts to £35,000. All this is only possible with the right level of funding.**

Currently reserves are being drawn but this cannot continue. Either the right level of financial support is forthcoming or the program has to be cut down significantly.

**The situation is not confined to the overall diocesan level: it affects the individual parishes as well.** Currently, the two London parishes have between them only less than 400 parishioner members whose annual dues have to support all their activities including church services. They too are having difficulties maintaining their work, let alone expand it. The 400 is such a small proportion of the community with a size of 14,000.

**There is a prevailing view over many years that rich benefactors and trusts will give the necessary monies. That might have been true at one time, but no longer: the church needs continuous, dependable and consistent regular income from more sources.**

Our clergy always stress to us that the church is not just the building, the clergy and the church services: it exists and thrives only through its congregations. **It is vital that the community does participates with their time and money to the church, without believing complacently that a few wealthy donors can be called on.** The church needs all its adherents and should not be restricted to such a small set of active people.

**So when you enter a church for a service expecting the doors to be open, the building to be lit up and heated, a priest at the altar, candles in the vestry, a choir and organist performing - think of what it takes to make all this happen. We must not take all this for granted.**

**Firstly, please become a parishioner for one of the churches who will appreciate the generosity of your regular dues.** Small annual amounts by many add up to a worthwhile level. The income from weddings and baptisms is not the reliable basis for sustained parish activities.

**Secondly consider giving additional donations either to the parish or the ACT to sustain a thriving church in all its aspects.** Do not just dip in and out of the church when you come expecting others to provide – you are an important member of the church too.

**This is an issue for all the community and should not be avoided. Thank You**

Please ask at St Yeghiche Church Desk for a copy of an application to register with our Parish.

## Ս. Ներսես Շնորհալի «Յաւատով խոստովանիմ» (աշխարհաբար)

«Յաւատով խոստովանիմ»-ը համաշխարհային հոգևոր գրականության գոհարներից է (թարգմանվել է 36 լեզուներով): Բաղկացած է 24 տնից (օրվա 24 ժամերի համեմատ) և բովանդակում է աղոթքի բոլոր տեսակները (դավանական, գղջական, պաղատական, խոստովանական և այլն): Հեղինակն այն անվանել է «**Քրիստոսին հավատացող յուրաքանչյուր անձի աղոթք**»: Գրված է արձակ, բայց հոգևոր ապրումների, հույզերի հարստությամբ և ներքին ռիթմով ազատ բանաստեղծություն է:



### Աշխարհաբար

#### Ա (1)

Հավատով խոստովանում և երկրպագում եմ Քեզ՝ Հայր և Որդի՝ և Սուրբ Հոգի, անստեղծ և անմահ բնություն, հրեշտակների, մարդկանց և բոլոր եղածների՝ Արարիչ, ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

#### Բ (2)

Հավատով խոստովանում և երկրպագում եմ Քեզ, անբաժանելի յո՛ւյս, միասնական Սո՛ւրբ Երրորդություն և Մի Աստվածություն, արարի՛չ յոյսի և հալածի՛չ խավարի, հալածի՛ր իմ հոգուց մեղքերի և անգիտութեան խավարը և յուսաւորի՛ր միտքս՝ աղոթելու Քեզ այժմ հանույքով ու ստանալու Քեզանից իմ խնդրածները. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

#### Գ (3)

Հայր երկնավոր, Աստված ճշմարիտ, որ առաքեցիր Քո սիրելի Որդուն մոլորված ոչխարիս փնտրելու համար, մեղա՛ երկնքի ու Քո առաջ, ընդունի՛ր ինձ ինչպես անառակ որդուն և հազցրո՛ւ ինձ առաջին պատմունանը, որից մերկացա մեղքով. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

#### Դ (4)

Որդի՛ Աստծո, Աստված ճշմարիտ, որ իջար հայրական ծոցից և մարմին առար սուրբ Կույս Մարիամից մեր փրկութեան համար, խաչվեցիր, թաղվեցիր և հարություն առար մեռելներից ու փառքով համբարձվեցիր առ Հայրը, մեղա՛յ երկնքի և Քո առաջ, հիշի՛ր ինձ, ինչպես ավազակին, երբ գաս Քո արքայությամբ. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

#### Ե (5)

Հոգի՛ Աստծո, Աստված ճշմարիտ, որ իջար Հորդանան և Վերնատուն և յուսավորեցիր ինձ սուրբ Ավագանի մկրտությամբ, մեղա՛յ երկնքի և Քո առաջ, մաքրի՛ր ինձ վերստին Քո աստվածային հրով, ինչպես հրեղեն լեզուներով՝ սուրբ առաքյալներին. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

#### Զ (6)

Անե՛ղ բնություն, մեղա՛ Քեզ իմ մտքով, հոգով և մարմնով, հանուն Քո սուրբ անվան մի՛ հիշիր իմ նախկին մեղքերը. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

#### Է (7)

Ամեն ինչ տեսնող Աստված, մեղանչեցի Քո առջև խորհրդով, խոսքով և գործով, ջրնջի՛ր իմ հանցանքների ձեռագիրը և գրի՛ր անունս Կեանքի Գրքում. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

#### Ը (8)

Գաղտնիքներ՝ քննող, մեղա՛ Քեզ կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ, թողություն շնորհիր մեղավորիս, քանզի սուրբ Ավագանի ծնունդից մինչև այսօր մեղանչել եմ Աստվածությանդ առաջ իմ զգայարաններով և մարմնիս բոլոր անդամներով. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

#### Թ (9)

Ամենախնամ՝ Տեր, Քո սուրբ երկյուղը պահապան դի՛ր այքերիս՝ ՝ այլևս անպատկառ չնայելու, ականջներիս՝ չախորժելու լսել չար խոսքեր, բերանիս՝ սուտ չխոսելու, սրտիս՝ չարը չխորհելու, ձեռքերիս՝ անիրավություն չգործելու, և ոտքերիս՝ անորեւնության ճանապարհով չգնալու, այլ ուղղի՛ր սրանց ընթացքը՝ միշտ լինելու ըստ Քո պատվիրանների. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

#### Ժ (10)

Հուր կենդանի Քրիստո՛ս, Քո սիրո հուրը, որ գցեցիր երկրի վրա, բորբոքի՛ր իմ անձում, որպեսզի այրի իմ հոգու ախտերը և սրբի իմ մտքի խիղճը, մաքրի իմ մարմնի մեղքերը և վառի Քո գիտության յույսն իմ սրտում. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

#### ԺԱ (11)

Հոր իմաստություն Հիսո՛ւս, տո՛ւր ինձ իմաստություն՝ ամեն ժամ Քո առջև բարին խորհելու, խոսելու և գործելու: Փրկի՛ր ինձ չար խորհուրդներից, խոսքերից և գործերից. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

**ԺԲ (12)**

Բարիք կամեցող Տե՛ր կմարար, մի՛ թող ինձ իմ անձի կամքով գնալ, այլ առաջնորդի՛ր ինձ միշտ լինել ըստ Քո բարեսեր կամքի. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

**ԺԳ (13)**

Արքա՛ երկնավոր, տո՛ւր ինձ Քո արքայությունը, որ խոստացար Քո սիրելիներին, զորացրո՛ւ իմ սիրտը՝ ատելու մեղքը և միայն Քեզ սիրելու և Քո կամքը կատարելու. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

**ԺԴ (14)**

Խնամո՛ղ արարածների, պահի՛ր Քո Խաչի նշանով իմ հոգին և մարմինը մեղքերի պատրանքներից, դևերի փորձություններից, անիրավ մարդկանցից և հոգու ու մարմնի բոլոր վտանգներից. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

**ԺԵ (15)**

Պահապա՛ն բոլորի Քրիստո՛ս, Քո աչք թող հովանի լինի ինձ վրա գիշեր թե ցերեկ, թե՛ տանը նստելիս, թե՛ ճանապարհ գնալիս, ննջելիս և թե՛ արթնանալիս, որպեսզի երբեք չսասանվեմ. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

**ԺԶ (16)**

Աստվա՛ծ իմ, որ բացում ես ձեռքերդ և լցնում բոլոր արարածներիդ Քո ողորմությամբ, Քեզ եմ հանձնում իմ անձը, Դո՛ւ հոգա և պատրաստիր իմ հոգու և մարմնի կարիքները այսուհետև մինչև հավիտյանս. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

**ԺԷ (17)**

Մոլորյալներին դարձի՛ բերող, ե՛տ դարձրու ինձ իմ չար սովորություններից բարի սովորության և բւեռի՛ր իմ հոգում մահվան սուկալի օրը և գեհե՛նի երկյուղը և արքայության սերը, որպեսզի զղջամ մեղքերիս համար և գործեմ արդարություն. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

**ԺԸ (18)**

Անմահության աղբյուր, բխեցրո՛ւ իմ սրտից ապաշխարության արտասուքներ, ինչպես պոռնիկին, որպեսզի լվանամ իմ հոգու մեղքերն աշխարհից ելնելուց առաջ. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

**ԺԹ (19)**

Պարգևի՛չ ողորմության, պարգևի՛ր ինձ ուղղափառ հավատքով և բարի գործով և Քո սուրբ Մարմնի և Արյան հաղորդությամբ գալ Քեզ մոտ. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

**Ի (20)**

Բարերա՛ր Տե՛ր, ինձ բարի հրեշտակի՛ հանձնիր՝ իմ հոգին քաղցրությամբ ավանդելու համար և անխռով անցկացնելու դևերի չարիքից, որոնք երկնքի ներքո են. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

**ԻԱ (21)**

Լո՛ւյս ճշմարիտ Քրիստոս, արժանակորի՛ր իմ հոգու կոչման օրը ուրախությամբ տեսնել Քո փառքի լույսը և բարիքների հույսով հանգչել արդարների օթևաններում մինչև Քո գալստյան մեծ Օրը. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

**ԻԲ (22)**

Արդա՛ր Դատավոր, երբ գաս Հոր փառքով՝ դատելու կենդանիներին և մեռյալներին, մի՛ մտնիր դատաստանի մեջ Քո ծառայի հետ, այլ փրկի՛ր ինձ հավիտենական հրից և լսելի՛ արա ինձ արդարների երանավետ կանչը դեպի երկնքի արքայությունդ. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

**ԻԳ (23)**

Ամենողո՛րմ Տե՛ր, ողորմի՛ր Քեզ հավատացողներին՝ յուրայիններին ու օտարներին, ծանոթներին ու անծանոթներին, կենդանիներին ու մեռյալներին. թողություն՛ւն շնորհիր նաև իմ թշնամիներին ու ատողներին ինձ դեմ գործած հանցանքների համար և ետ դարձրու նրանց չարիքից, որ պահում են իմ դեմ, որպեսզի նրանք էլ արժանի լինեն Քո ողորմութեանը. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

**ԺԴ(24)**

Փառավորյա՛լ Տե՛ր, ընդունի՛ր Քո ծառայի աղաչանքները և ի բարի՛ կատարիր իմ խնդրվածքները՝ բարեխոսությամբ սրբուհի Աստվածածնի և Հովհաննես Մկրտչի և սուրբ Ստեփանոս Նախավկայի և մեր սուրբ Գրիգոր Լուսավորչի և սուրբ առաքյալների, մարգարեների, վարդապետների, մարտիրոսների, հայրապետների, ճգնավորների, կույսերի, միանձանց և Քո բոլոր երկնավոր և երկրավոր սուրբերի. և Քեզ անբաժանելի Սուրբ Երրորդությանդ, փա՛ռք և երկրպագություն հավիտյանս հավիտենից

Ամէն:

## 4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By the Order of His Holiness Karekin II Supreme Catholicos and Patriarch for All Armenians, at the end of Divine Liturgy a special memorial service will be offered for our compatriot's 30<sup>th</sup> Anniversary who fell in Baku and Sumgayt.

By Sarkis and Viken Krikorian and Families for the soul of their Mother and Grandmother the late **NECKTAR ELIAS KRIKORIAN (ՆԵՔՂԱՐ ԵԼԻԱՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ)**, also for all the old and new deceased members of the **KRIKORIAN** Family.

By Mr. & Mrs. Hrayr & Seta Boghosian and Family for the soul of their Parents and Grandparents the late **HAROUT & AREKNAZ MARTIROSIAN**, also for all the old and new deceased members of **MARTIROSIAN, SIMONIAN** and **BOGHOSIAN** Families.

By Zara Sokratyan and Armen Karapetyan for the soul of their Parents the late **YURI KARAPETYAN, SVETLANA SHIOYAN, KIM** and **JEMMA SOKRATYAN, KLARA ISRAELYAN** and **ROBERT MKRTCHYAN**, also for all the old and new deceased members of the **KARAPETYAN, SHIOYAN, SOKRATYAN, ISRAELYAN** and **MKRTCHYAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

**Rev Fr Nshan Alaverdyan** is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգևոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրհնէքի, հիւանդի այցելութեան, Սր Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք Հոգևոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին 07548 777 147:

## ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk)  
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

### Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk) by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted.*

## ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website [www.styeghiche.org.uk](http://www.styeghiche.org.uk)

St Yeghiche Parish Council appeals to all members for **prompt** payment of their **annual membership dues and generous donations**, thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: **“St Yeghiche Armenian Church”**. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.